



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԸ ԾԽԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ ՆՈՐԹ ՀՈԼԻՎՈՒՏԻ ՄԷՋ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը այսու կը յայտարարեն, որ Նորթ Հոլիվուտի շրջանին մէջ կը հաստատուի ծխական նոր համայնք մը, որ պիտի կոչուի ՆՈՐԹ ՀՈԼԻՎՈՒՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ:

Ծխական նոր համայնքի մը հաստատումը բնական արտայայտութիւնն է շրջանի հայութեան իրավիճակին: Արդարեւ, Նորթ Հոլիվուտ ասանն ու շրջակայքը ունին հոծ հայութիւն, որ կարիքը ունի հոգեմտաւոր մատակարարումի: Ամիսներ առաջ, շրջանէն ազգայիններ պաշտօնապէս դիմում ներկայացուցած էին Ազգային Առաջնորդարան, որպէսզի գոհացում տրուի այս պահանջին: Թեմիս Խառն Ժողովը, յետ նախնական քննարկումներու եւ հաղորդակցութիւններու, ամբողջացուց ծխական համայնքի կազմութեան նախնական աշխատանքները: Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն՝ Գերպ. Տ. Սիւռն Շ. Վրդ. Ազնիկեան նշանակուեցաւ ծխական համայնքի հոգեւոր մատակարար, որ գործի լծուած է նորակազմ յանձնախումբի մը հետ, ամբողջացնելու համար կազմակերպչական աշխատանքները:

Սկզբնական շրջանին, ծխական համայնքը իր արարողութիւնները պիտի ունենայ շրջանի St. Paul Assyrian-Chaldean Catholic Church եկեղեցոյ մէջ (13050 Vanowen Street, North Hollywood, CA 91605): Առաջին Ս. Պատարագը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Ս. Ծննդեան տօնին օրը՝ Երեքշաբթի, 6 Յունուար 2009: Հանդիսաւոր Ս. Պատարագի ասարտին, պիտի կատարուի Ջրօրհնէք: Այնուհետեւ, կիրակնօրեայ Ս. Պատարագի արարողութիւններուն կողքին, տեղի պիտի ունենան Ս. Գրային սերտողութեան պահեր:

Կոչ կ'ուղղենք շրջանի հայութեան, որ խումներամ մասնակից ըլլալ արարողութեանց ու բոլորուելով նորահաստատ եկեղեցոյ շուրջ՝ ձեռնարկէ իր սեփական եկեղեցին կերտելու նուիրական աշխատանքին:

ESTABLISHMENT OF A NEW PARISH IN NORTH HOLLYWOOD

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the Religious and Executive Councils hereby announce the establishment of a new parish in North Hollywood which will be called the Armenian Apostolic Church of North Hollywood.

The parish is being established to serve the spiritual needs of the large Armenian community in North Hollywood and surrounding areas. The Prelacy Councils and a special committee designated for this specific endeavor have undertaken the establishment of the parish and continue to work towards finalizing the particulars.

Christian Education Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian has been assigned pastor of the parish, which will hold services at St. Paul Assyrian-Chaldean Catholic Church (13050 Vanowen St., North Hollywood, CA 91605). The first Divine Liturgy will be celebrated on Tuesday, January 6th, 2009, on the Birth and Epiphany of our Lord Jesus Christ. The traditional blessing of water will follow the Liturgy.

In addition to weekly Divine Liturgy, Bible study will also be offered at the parish.

We invite our faithful parishioners to participate in these uplifting services and contribute to the progress of this newly established parish.

50ԱՄԵԱԿ՝ ՀԻՄՆՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԻՆ, 35ԱՄԵԱԿ՝ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻՍ

Կիրակի, 21 Դեկտեմբերի երեկոյեան, Կլենտլիի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի, ներկայութեամբ պաշտօնական եւ ներկայացուցչական անձնաւորութիւններու ու մեծաթիւ հաւատացեալներու, հանդիսաւոր տօնախմբութեամբ նշեցինք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ Հիւսիսային Ամերիկայի մէջ ծառայական առաքելութեան սկզբնաւորման 50րդ տարեդարձն ու Արեւմտեան Միացեալ Նահանգներու Թեմի հաստատման 35ամեակը:



Տօնակատարութեան ներկայ ըլլալու համար Լոս Անճելըս ժամանած էր Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Ս. Արք. Զօլոյեան: Ներկայ էին Թեմիս նախկին առաջնորդներէն Բարձր. Տ. Եփրեմ Արք. Թապագեան, Հայ Կաթողիկէ

ու Աւետարանական համայնքներու հոգեւոր առաջնորդները, Միսիթարեան վարժարանի տնօրէնը, Թեմիս հոգեւորականաց Դասը, Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան, Ազգ.

Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Տեարք Խաժակ Տիքիճեան եւ Վահե Եագուպեան, Զ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Դոկտ. Վիգէն Յովսէփեան, Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան եւ անդամներ, միութենական ներկայացուցիչներ, ծխական շրջաններու ժողովականութեան անդամներ, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմնի անդամներ եւ տնօրէններ, Ազգ. Առաջնորդարանի բարերարներ եւ մեծ թիւով հանդիսականներ:

Առաջնորդ Սրբազանն ու հոգեւորականաց դասը եկեղեցի մուտք գործեցին թափօրով, ու ներկաներուն հետ կատարեցին Տերունական Աղօթքը: Սուրեն Սրկ. Զագարեան կատարեց Միացեալ Նահանգներու եւ Զայաստանի քայլերգները:

Բացման խօսքը արտասանեց հանդիսավարը՝ Դոկտ. Ռուբինա Փիրումեան: Յուլիանա Թեմիս պատմութիւնը ներկայացնող տեսաերիս մը, որ կը բացուէր Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի յատուկ ողջոյնի խօսքով ու պատգամով: Բանախօսեցին Տեարք Արման Զեօսեան եւ Խաժակ Տիքիճեան: Գեղարուեստական բաժինին մասնակցութիւն բերին Իրանահայ Միութեան երգչախումբը, ղեկավարութեամբ Միքայէլ Աւետիսեանի. զուգերգով հանդես եկան Ռազմիկ Մանսուրեան եւ Անահիտ Ներսիսեան:

Փակման խօսքը կատարեց եւ իր պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազանը, որ այս առիթով ներկաներուն աւետեց Նորթ Յոլիվուտի մէջ ծխական նոր համայնքի մը հաստատումը: Զանդիսութիւնը վերջ գտաւ «Կիլիկիա» երգով:

(Զանդիսութեան մանրամասնութիւնները տեսնել սոյն կայքէջի լրատուութեան բաժինին մէջ):

35TH ANNIVERSARY OF THE PRELACY CELEBRATED

On Sunday, December 21st, the 35th anniversary of the Western prelacy was ceremoniously celebrated at St. Mary's Church in Glendale. The event took place under the auspices of the Prelate and was organized by the 35th anniversary committee.



Among those in attendance were H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, H.E. Archbishop Yeprem Tabakian, clergy, Consul General Armen Liloyan, ARF Bureau and Central Committee members, Central Executive and

Executive Council members, Delegates, Boards of Trustees, representatives of community organizations, and hundreds of faithful.

The program consisted of remarks by Archbishop Choloyan, keynote speeches by Mr. Armand Keosian, Esq., in English, and Mr. Khajag Dikijian in Armenian, a video presentation of the Prelacy history, and musical

presentations by Razmig Mansourian, Anahid Nersisyan accompanied on the organ by Prof. Levon Aprahamian, and the Armenian Society of Los Angeles Choir led by conductor Mikayel Avedissian. The program concluded with the Prelate's remarks and benediction. Dr. Rubina Peroomian served as Master of Ceremonies.

Please visit the news section of our website for the full press release and photos.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ Ս. ԽԱՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Համաձայն մեր եկեղեցւոյ տօնացոյցին, Հինգշաբթի, 25 Դեկտեմբերը տօնն էր քրիստոնէութեան առաջին նահատակ՝ Ս. Ստեփանոս Սարկաւազին:

Կիրակի, Դեկտեմբեր 28-ին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Ս. Պատարագի ընթացքին, Սուրբ Ստեփանոսի յիշատակը պիտի նշուի եւ մեր քահանայ հայրերը իրենց քարոզներուն մէջ վեր պիտի առնեն Ստեփանոս Սարկաւազի նահատակութեան իմաստը: Սուրբ Ստեփանոսի տօնը տօնն է նաեւ մեր բոլոր սարկաւազներուն:

Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Մոնթեպելլոյի Սուրբ Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան յատուկ պատգամը:

PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY CROSS CATHEDRAL IN MONTEBELLO

According to the Armenian Church calendar, Thursday, December 25th, was the Feast of St. Stephen the Proto-deacon and first martyr. The life and martyrdom of St. Stephen will be remembered in during Divine Liturgy on Sunday, December 28th, in all our churches.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Cross Cathedral in Montebello and deliver the sermon.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀՅՈՐ ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԱՄԱՆԴԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ

Ազգային Առաջնորդարանի տարիներու բարի աւանդութեանց շարքին է Առաջնորդ Սրբազան Հօր Ս. Ծննդեան ընթրիքը:

Ամէն տարի, 6 Յունուարի երեկոյեան, հոգեւորականաց դասը, ժողովականութեան ներկայացուցիչներ, բարերարներ ու բարեկամներ մէկ

յարկի տակ կը համախմբուին Առաջնորդ Սրբազան Զօր ու հոգեւորականներուն շուրջ, աղօթքով ու բարեմաղթութեանց փոխանակումով սկսելու նոր տարին ու յիշատակելու Զրիստոսի հրաշալի Ս. Ծնունդը:

Այս տարի եւս, նախաձեռնութեամբ Թեմիս Կոստական Ժողովին ու Ազգային Վարչութեան, Առաջնորդ Սրբազան Զօր Ս. Ծննդեան ընթրիքը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 6 Յունուար 2009-ին, երեկոյեան ժամը 6:30-ին, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի «Բաղրամեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կազմակերպուած է Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ:

PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS DINNER

Each year on the Feast of the Birth and Theophany of our Lord Jesus Christ, hundreds of Prelacy faithful, sponsors, and representatives of community organizations gather for the Prelate's New Year and Christmas dinner.

This year's dinner will take place on Tuesday, January 6th, 2009, at 6:30 p.m., at "Bagramian" Hall of Holy Cross Cathedral in Montebello,

The dinner is organized by the Ladies Auxiliary.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԱՅ ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱՅԻ Յ.Յ.Դ. «ՉԱԼԱՐԵԱՆ» ԿՈՄԻՏԵԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի, 23 Դեկտեմբերի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Լա Քրեսենթայի շրջանի Յ. Յ. Դ. «Չալարեան» Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Խաչիկ Զաւարթեանի եւ չորս անդամներու: Առաջնորդ Սրբազանին կողքին, ներկայ էին Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան եւ անդամներ՝ Տեարք Սիեր Տեր Յովհաննեսեան եւ Տոբթ. Նաւասարդ Գազազեան:



Ժրագիրներուն ու աշխատանքի դաշտերուն մասին, պատրաստակամութիւն յայտնելով սերտօրէն գործակցելու Ազգ.

Չալարեանի կողմէն ունէր քաղաքավարական բնոյթ: Զիւր ներկայացուցիչները Ազգ. Առաջնորդարան եկած էին փոխադարձ ծանօթացման, ինչպէս նաեւ տօնական օրերու առիթով բարեմաղթութիւններ փոխանցելու համար: Անոնք ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ տուին Կոմիտէի ու գործակից միաւորներու

Առաջնորդարանին հետ, մանաւանդ, որ կը գործեն աշխարհագրական նոյն շրջանին մէջ:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց հիւր ներկայացուցիչները, որոշ տեղեկութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանի անմիջական աշխատանքներուն մասին, յիշեցնելով, որ երկու օր առաջ, տօնակատարուեցաւ Հիւսիսային Ամերիկայի Թեմի հաստատման 50րդ, ու մեր Թեմի ծառայական կեանքի 35րդ տարեդարձները: Ան գոհունակութիւն յայտնեց, որ Թեմական աշխատանքներու զարգացման մէջ կարելոր ներդրում ունին մեր կազմակերպութիւններն ու միութիւնները, վստահութիւն յայտնելով, որ գործակցութիւնը պիտի ընդարձակուի թեմական աշխատանքներու տարածումին հետ: Ան այս առիթով գոհունակութիւն յայտնեց, որ նախապատրաստական աշխատանքներէ ետք, Ազգ. Առաջնորդարանը արդէն հասած է Նորթ Յոլիվուտի մէջ ծխական նոր համայնք մը հիմնելու հանգրուանին եւ թէ՛ առաջին Ս. Պատարագը պիտի մատուցուի Ս. Ծնունդի օրը:

Խորհրդակցութիւնը ընդգրկեց կազմակերպութեան, Ազգ. Առաջնորդարանին եւ յատկապէս Զրեսենթա Յովիտի Յայց. եկեղեցւոյ միջեւ գործակցութիւնը խորացնելու միջոցները: Կարելորութեամբ վեր առնուեցաւ երիտասարդութեան հոգեմտաւոր կարիքներուն գոհացում տալու պարագան, որուն համար եկեղեցւոյ, կազմակերպութեան ու միութեանց միջեւ գործակցութիւնը կենսական է: Գնահատանք արձանագրուեցաւ Զրեսենթա Յովիտի եկեղեցւոյ ժողովականութեան նուիրեալ ծառայութիւններուն մասին, յոյս յայտնելով, որ ժողովուրդին զօրակցութեամբ, կարելի ըլլայ կառուցել սեփական եկեղեցի մը:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ յանձնեց հիւր ներկայացուցիչներուն:

ARF ZAVARIAN GOMIDEH MEETS WITH THE PRELATE

On the evening of Tuesday, December 23rd, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy ARF Zavarian Gomideh representative



Mr. Khatchig Havatian and members. Executive Council Chair Dr. Garo Agopian and members Mr. Meher Der Ohanessian and Dr. Navasart Kazazian were also at the meeting.

The guests had come to convey their will wishes to the Prelate on the eve of the New Year and Christmas and for a general discussion on their current endeavors.

The Prelate conveyed to the guests information about the undertakings of the Prelacy and specifically the 50th anniversary of the North American

Prelacy and the 35th anniversary of the Western Prelacy which was celebrated just two days earlier. He expressed appreciation for the collaboration of our community organizations in the Prelacy's activities and his confidence that the cooperation will continue as the work of the Prelacy expands. The Prelate also announced the establishment of a new parish in North Hollywood where Divine Liturgy will be celebrated for the first time on the Feast of the Birth and Epiphany of Jesus Christ. The Prelate and guests also discussed the importance of collaboration between the church and organizations in the shaping of our youth. In discussing the Crescenta Valley parish, the Prelate commended the dedication of the parish members in advancing the church and expressed hope that the parish will have its own church in the near future.

The meeting concluded with the presentation of mementos by the Prelate.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԹԵԿՆԱԾՈՒ ՆԻՔ ՓԱՅԱՈՒՐԱՍԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի, 23 Դեկտեմբերի յետմիջօրէին, Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Տիար Նիք Փացաուրասի, որ թեկնածու է Լոս Անճելըս քաղաքի վերահսկիչի պաշտօնին: Հանդիպումին ներկայ եղան «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տնօրէն Տիկին Մարիա Միրանեան եւ Ազգ. Առաջնորդարանի բարեկամներէն Տիար Վահէ Տէր Չաքարեան:



Հիւր թեկնածուն Առաջնորդ Սրբազանին ներկայացուց իր ծրագիրները, որոնց շուրջ տեղի ունեցաւ տեսակէտներու փոխանակում: Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց այս այցելութեան ու լուսաբանութիւններուն համար եւ յաջողութիւն մաղթեց Տիար Փացաուրասի:

Հիւր թեկնածուն Առաջնորդ Սրբազանին ներկայացուց իր ծրագիրները, որոնց շուրջ տեղի ունեցաւ տեսակէտներու փոխանակում: Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց այս այցելութեան ու լուսաբանութիւններուն համար եւ յաջողութիւն մաղթեց Տիար Փացաուրասի:

Հիւր թեկնածուն Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց այս այցելութեան ու լուսաբանութիւններուն համար եւ յաջողութիւն մաղթեց Տիար Փացաուրասի:

LOS ANGELES CITY CONTROLLER CANDIDATE NICK PATSAOURAS MEETS WITH THE PRELATE

On the afternoon of Tuesday, December 23rd, candidate for Los Angeles City Controller Nick Patsouras visited the Prelacy and met with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. President of Armenia Fund Mrs.

Maria Mehranian and Prelacy sponsor Mr. Vahe Ter-Zakarian also participated in the meeting.

During their meeting Mr. Patsouras relayed information to the Prelate regarding his current endeavors. The Prelate thanked him for the information he conveyed and wished him success in his campaign.
